

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԽՈՋԱԲԵԿՅԱՆ Վ. Ե., ՓԱՓԱԶՅԱՆ Խ. Ս.

Զբաղվածության հիմնախնդիրների կարգավորումը աշխատանքի շուկայում: Խորհրդային Միության կազմալուծմամբ Հայաստանը և խորհրդային մյուս հանրապետությունները, կորցնելով ապրանքների և ծառայությունների իրացման ավանդական շուկաները, կորցրեցին նաև տարիների ընթացքում ձևավորված ավանդական տնտեսական բոլոր կապերը: Անցումը տնտեսության շուկայական եղանակին տեղի ունեցավ բավական անարդյունավետ, քանի որ կառավարման, մարքեթինգի և, ընդհանրապես, գործարար միջավայրում փորձի պակասը, դրան ավելացրած՝ պետության բարձիթողի վիճակը նպաստեցին հանրապետությունում սոցիալ-տնտեսական ծայրաստիճան լարված իրավիճակի ձևավորմանը:

Այդ տարիներին հանրապետությունում ահռելի ծավալների հասնող գործազրկության (շուրջ կես միլիոն մարդ), բնակչության թերզբաղվածության հետևանքով աղքատությունը մեծ չափերի էր հասել. դրա պատճառներից էին նաև տնտեսության ծանր ու թեթև արդյունաբերական համալիրի խոշոր ձեռնարկությունների չտրամաբանված ու չհիմնավորված սեփականաշնորհումը, այնուհետև՝ լուծարումը: Գյումրիի, Վանաձորի, Հրազդանի, Չարենցավանի, Աբովյանի, Ալավերդու, Կապանի, Գորիսի, Քաջարանի, մասամբ նաև Սոթքի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների լուծարումով կաթվածահար եղան երկրի արդյունաբերական ողջ համալիրն ու ոլորտի ներուժը: Այդ ամենի հետևանքով մարդկային կապիտալը շուրջ 15 տարի ոչ միայն չէր կուտակվում, այլև անհիմաստ վատնվում էր: Աշխատանքի շուկայում իրավիճակը գնալով սրվում էր: Այն բարելավելու համար անհրաժեշտ էր պետական անհապաղ աջակցություն, պետության տնտեսական գործառնությունների վերականգնում և աշխուժացում: Այսօր էլ հանրապետությունում ոչ միայն զգացվում, այլև խիստ կարևորվում է պետության դերը աշխատանքի շուկայում. պետությունը, ուշադրությունը կենտրոնացնելով ինչպես աշխատանքի շուկայի, այնպես էլ զբաղվածության, գործազրկության խնդիրների կարգավորման քաղաքականության մշակման վրա, պետական միջոցառումների մշակման և իրականացման շնորհիվ պետք է նվազագույնի հասցնի թե՛ մասնավոր և թե՛ պետական հատվածում աշխատուժ-գործատու հարաբերությունների տարերայնությունն ու անկատարությունը:

Որն է երկրի տնտեսություն, անկախ տնտեսավարման եղանակից և ձևից, ներկայացնում է ձեռնարկությունների և ճյուղերի ամբողջություն, որոնք միմյանց

հետ գտնվում են փոխադարձ կապի մեջ: Տնտեսական յուրաքանչյուր միավորի գործունեությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ մյուսների վրա: Ընդհանրապես՝ ողջ հասարակության տնտեսական կյանքում իրականացվող ցանկացած գործունեություն կարող է մեծապես ազդել հասարակական կյանքի մյուս ոլորտների վրա, ուրեմն, կարելի է ասել, որ տնտեսության արագ կամ ցածր տեմպերով զարգացումը մեծապես ազդում է երկրի քաղաքական, սոցիալական, մշակութային, պատմական և այլ ոլորտների վրա: Համաշխարհային տնտեսության զարգացման փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր պետություն կարող է ունենալ տնտեսական զարգացման իր առանձնահատկությունները, սակայն համաշխարհային պրակտիկան վկայում է, որ ընդհանուր առմամբ՝ տնտեսությունները պետք է ենթարկվեն պետական կարգավորման՝ համապատասխան պլանավորման, ծրագրավորման և վերահսկողության: Պետական կարգավորումն իր չափի մեջ կարող է լինել ավել կամ պակաս, ընդհանուր կամ մասնակի, ինչպես, օրինակ՝ վարչահրամայական համակարգի պայմաններում այն ուներ համընդհանուր բնույթ, որտեղ կարգավորման էր ենթարկվում ամեն ինչ: Շուկայական տնտեսության պայմաններում հենց պետությունն է, որ կարող է ստեղծել սոցիալական կոնկրետ միջավայր, որտեղ հնարավոր կլինի պարզել, թե ապրանքների և ծառայությունների ինչ քանակ, ինչ պայմաններում, որտեղ և ում համար կարող է արտադրվել, և այս դեպքում հայտնի են դառնում պետության գործառույթները տվյալ երկրի տնտեսության ձևավորման ու կազմավորման մեջ:

Շուկայական տնտեսության պայմաններում պետության առանցքային խնդիրներից է նաև առողջ մրցակցության և ազատ տնտեսական գործունեության անհրաժեշտ ու կարևոր պայմանների ստեղծումը, որոնք նույնպես իրենց ուղղակի կամ անուղղակի ազդեցությունն են թողնում աշխատանքի շուկայի կարգավորման վրա: Դրա համար պետությունը տիրապետում է հստակ և փոխկապակցված մի շարք լծակների, որոնց համալիր կիրառման շնորհիվ կարելի է ձևավորել նպաստավոր պայմաններ՝ ինչպես տնտեսվարող սուբյեկտների, այնպես էլ ողջ հասարակության ներդաշնակ ու բնականոն զարգացման համար: Որպես այդպիսիք՝ կարելի է առանձնացնել պետության կառուցվածքային, հարկային, բյուջետային, դրամավարկային, արտաքին տնտեսական քաղաքականությունները, որոնցով էլ ձևավորվում են պետության հիմնական գործառույթները: Նշված քաղաքականության տեսակները պետք է այնպես մշակվեն և իրագործվեն, որ հայրենական արտադրողն իրեն պաշտպանված զգա: Արդյունաբերական և գյուղատնտեսական երբեմնի հզոր ձեռնարկությունների անգործությունը ոչ միայն նախկին կապերի փլուզման պատճառով ներկրվող հումքային պաշարների ավելի քան հարյուրապատիկ նվազման, այլև՝ ներտնտեսական կոոպերացման կապերի բացակայության, գործող ձեռնարկությունների միջև այդպիսիք ստեղծելու չափազանց նվազ հնարավորությունների, արտադրվող արդյունքների որակական խիստ ցածր հատկանիշների, անմրցունակության, արտաքին աշխարհի կողմից

առկա բավական ցածր պահանջարկի, ինչպես նաև այդ պահանջարկը բացահայտող համապատասխան օղակների անգործունակության և այլ գործոնների հետևանք է: Թեև աշխատանքի շուկայում պետության թափանիվը դեռևս լիարժեք չի գործում, բայց նաև չի կարելի չնկատել վերջին տարիներին ոլորտում տեղի ունեցող որոշակի դրական տեղաշարժերը: Հատկապես գնահատելի է կառավարության՝ նոր աշխատատեղեր ստեղծելու պատրաստակամությունը, որտեղ առաջնությունը տրվում է զբաղվածության ճյուղային կառուցվածքի տեղաշարժերին:

Հաջորդ՝ պետության տնտեսական քաղաքականության հիմքում առանցքային նշանակություն ունեցող խնդիրը գործազրկությունն է, որն աշխատանքի շուկայի անբաժանելի հայտանիշներից է: Այդ հիմնահարցի քննարկման ժամանակ սովորաբար առանձնացնում են պաշտոնական և ոչ պաշտոնական աշխատանքի շուկաներ հասկացությունները: Հայաստանում, մասնավորապես՝ երկրի սահմանամերձ, բարձրադիր՝ լեռնային և նախալեռնային շրջաններում, բավական արդիական և մեծ հետաքրքրություն ներկայացնող խնդիր է ոչ պաշտոնական զբաղվածության և թաքնված գործազրկության ուսումնասիրությունը, քանի որ այդ երևույթները պայմանավորում են աշխատանքի շուկայի ձևավորման և գործունեության օրինաչափություններն անցումային տնտեսությունում: Ավելին՝ ի տարբերություն արևմտյան, զարգացած շուկայական տնտեսություն ունեցող մի շարք երկրների, փաստացի գործազրկության և զբաղված գործազրկության միջև հսկայական չափերի հասնող տարբերությունը շատ է դժվարացնում գործազրկության զսպումը: Այսպես կոչված՝ «թաքնված» գործազուրկները գերազանցապես ընդգրկված են ստվերային տնտեսության օղակներում: Ահռելի տոկոս են կազմում հատկապես գյուղատնտեսական մթերքների վերավաճառքի օղակներում առքուվաճառքով զբաղված վերավաճառողները, մանրավաճառները և մանրարտադրողները, որոնց զգալի մասը մասնավոր գյուղացու նման ինքն է գործադրում իր աշխատուժը՝ մի կողմից այն չդարձնելով առքուվաճառքի օբյեկտ, մյուս կողմից՝ ստացված եկամուտներից պետական գանձարանին բաժին չհանելու միջոցով չի հաշվառվում վիճակագրական համապատասխան մարմինների կողմից, որի հետևանքով էլ խեղաթյուրվում են աշխատանքային ներուժի իրական գնահատականը և պատկերը: Դա ևս մեկ անգամ փաստում է, որ Հայաստանում աշխատանքի շուկան իր վրա դեռևս չի կրում քաղաքակրթության կնիք:

Շուկայական տնտեսության պայմաններում պետության միջամտության անհրաժեշտությունը զգացվում է նաև զբաղվածների սոցիալական պաշտպանվածության հիմնախնդրի կարգավորման գործում: Եթե պետական հաստատություններում, լավ թե վատ, ինչ- որ չափով զբաղվածներն իրենց «պաշտպանված» են համարում, ապա նույնը չի կարելի ասել մասնավոր հատվածի մասին, որտեղ նույնիսկ չեն պահպանվում աշխատանքային հարաբերությունների էթիկայի տարրական նորմերն ու կանոնները, շատ հաճախ նույնիսկ ոտնահարվում են մարդկանց իրավունքները, ինչը մնում է անպատիժ:

Այսպիսով, պետությունը տնտեսության պետական կարգավորման առումով լայն հնարավորություններ ունի՝ սկսած տնտեսական օրենսդրության կատարելագործումից մինչև զբաղվածության և գործազրկության վրա ներգործությունը: Նշված կատեգորիաները փոխապայմանավորված են մեկը մյուսով և կարգավորում են երկրի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ողջ համակարգը, որոնց հարաբերակցությունն արտացոլում է աշխատանքի շուկայի առավել համադրելի բնութագիրը: Թեև աշխատանքի շուկան հարաբերականորեն նոր հասկացություն է մեր հասարակարգում, այնուամենայնիվ, այն պետք է լինի պետական և հասարակական-քաղաքական կառույցների ամենօրյա ուշադրության կենտրոնում, որը պետք է սևեռվի այդ շուկայի կարգավորման առավել լավ և արդիական մեխանիզմների, համաշխարհային լավագույն փորձի ուսումնասիրմանն ու տեղայնացմանը:

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը՝ աշխատանքի շուկայի հիմնախնդիրների կարգավորման լավագույն մեխանիզմ: 1. Փոքր և միջին ձեռնարկատիրության առավելությունները: Հայաստանում աշխատանքի շուկայի պետական կարգավորման կարևորագույն և լավագույն մեխանիզմը փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումն է՝ պայմանավորված նոր աշխատատեղեր ստեղծելու բարձր ձկունությամբ, ինչն էլ, իր հերթին, մեղմացնելով աշխատանքի շուկայի լարվածությունը, տնտեսական և սոցիալական կայունության ապահովման լուրջ գրավական է դառնում: Փոքր և միջին ձեռնարկատիրության համընդհանուր սահմանում գոյություն չունի: Այն իր տարածումն է գտնում տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում, որտեղ առկա են դրա զարգացմանն անհրաժեշտ նպաստավոր պայմանները, ինչպես, օրինակ, ծառայությունների ոլորտում, մանրածախ առևտրի, վերամշակող արդյունաբերության ճյուղերում, ֆերմերային տնտեսության բնագավառում և այլն: Խոշոր հաշվով՝ դրա զարգացումը կախված է սովյալ երկրի տնտեսական քաղաքականության զարգացման կուրսից: Հայաստանում, ըստ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտները դասակարգվում են գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների: Ըստ հիշյալ օրենքի, այդ ձեռնարկություններում աշխատողների միջին ցուցակային թվաքանակը որոշվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով¹:

Աշխարհի ավելի քան 100 երկրներում նման ձեռնարկություններ են համարվում 100-500 աշխատող ունեցողները: Եվրամիության երկրները հիմնականում առաջնորդվում են Եվրոպական հանձնաժողովի՝ փոքր և միջին ձեռնարկությունների սահմանման վերաբերյալ հանձնարարականներով, համաձայն որոնց, փոքր են համարվում 50-ից պակաս աշխատող և 7 մլն եվրոյից պակաս շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները: Միջին ձեռնարկության չա-

¹ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, 28.XII.2000 (ՀՕ-121), հոդված 2, կետ 3:

փանիշ է մինչև 250 աշխատողը և 40 մլն եվրոյից պակաս շրջանառության ծավալը²: Հարկ է փաստել, որ անգնահատելի է փոքր և միջին ձեռնարկատիրության կարողությունների դերը հասարակության համար այդքան կարևոր դարձած միջին խավի ձևավորման հարցում: Բացի նոր աշխատատեղեր ստեղծելու մեծ հնարավորություններից, փոքր և միջին ձեռնարկությունները շուկայական տնտեսության պայմաններում օժտված են նաև այլ հատկություններով: Մասնավորապես՝ այդ կարգի ձեռնարկություններն ի գործու են, ոչ մեծ կապիտալ ներդրումների շնորհիվ, օգտագործելով տեղական հումքը, կարճատև ժամանակահատվածում բավարարել հասարակության լայն զանգվածների պահանջունքները՝ դրանով իսկ զարկ տալով տեղական արտադրության ծավալների ընդլայնմանն ու աճին: Փոքր և միջին ձեռնարկատիրության ցանցն ընդլայնվելով, մի կողմից, պայմաններ է ստեղծում գիտատեխնիկական առաջընթացի նվաճումներն արագորեն ներդնելու համար, մյուս կողմից՝ հեշտությամբ ընկալելով և կիրառելով դրանք՝ ձեռք է բերում մրցակցային առավելություններ և շուկայում կայուն դիրքեր զբաղեցնում: Փոքր ձեռնարկություններն աչքի են ընկնում կառավարչական համակարգի պարզությամբ և մատչելիությամբ, ինչը զգալի չափով խնայողություններ կատարելու իրական աղբյուր է ծառայում ձեռնարկատերերի և գործարարների համար:

Այսօր համաշխարհային տնտեսական հարաբերություններում աննախադեպ տեմպերով է զարգանում փոքր ու միջին ձեռնարկատիրությունը: ՄԱԿ-ի փորձագետների տվյալների համաձայն, աշխատանքի շուկայի կարգավորման լավագույն տարբերակներից մեկը հենց փոքր ձեռնարկությունների ստեղծումն ու զարգացումն է: Զարգացած երկրների մեծ մասում բնակչության ավելի քան կեսը զբաղված է նմանատիպ ձեռնարկություններում, որտեղ, ըստ տարբեր գնահատականների, ձևավորվում է երկրի համախառն ներքին արդյունքի մոտ 50-60%-ը: Միննույն ժամանակ, համաշխարհային փորձը վկայում է, որ շուկայական տնտեսության կայացման անհրաժեշտ նախադրյալներից է հենց փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման նպաստավոր միջավայրի ձևավորումը, հատկապես Հայաստանի նման երկրներում, քանի որ այն ապահովում է ճկուն և մրցակցության վրա հիմնված մասնավոր հատվածի ձևավորում, ստեղծում է բազմաթիվ աշխատատեղեր, հնարավորություն ընձեռում համեմատաբար կարճ ժամանակահատվածում ապահովել կայուն տնտեսական աճ: Ասվածի ապացույցն են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության տվյալները, որոնք խոսում են փոքր և միջին ձեռնարկատիրության կարևորության և արդիականության մասին: Այսպես, համաձայն ուսումնա-սիրությունների, հիշյալ կազմակերպության 30 անդամ-երկրներում փոքր և միջին ձեռնարկությունների մասնաբաժինը կազմում է ձեռնարկությունների ընդհանուր մասնաբաժնի 95%-ը, դրանցում ընդգրկված է ընդհանուր աշխատուժի 60-70%-ը՝ համախմբելով աշխա-

² Հայաստանյան զարգացումներ, Q4/2004 (# 5), էջ 31:

տատեղերի գերակշիռ մասը³: Ըստ նույն աղբյուրի վկայակոչած տվյալների, Եվրամիության երկրներում զբաղվածության 72%-ն ապահովում են փոքր և միջին ձեռնարկությունները, որտեղ ձևավորվում է համախառն ներքին արդյունքի 66%-ը⁴: Հայաստանում, չնայած այն բանին, որ նման ցուցանիշների հաշվարկը կախված է որոշակի տեխնիկական բարդություններից, այնուամենայնիվ, վերջին տարիներին հաշվարկներ արվում են, բայց ներկայացված որոշ ցուցանիշների արժանահավաստությունը խիստ կասկածելի է և այդքան էլ չի համապատասխանում իրականությանը:

2. Փոքր և միջին ձեռնարկատիրության ձևավորումը և դրա ընթացիկ պատկերը Հայաստանում: Նորանկախ Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկությունների նշանակալի աճ արձանագրվեց 1990-ական թվականների սկզբին՝ կապված սեփականաշնորհման և ապապետականացման լայնամասշտաբ գործընթացների հետ: Մակայն, ինչպես արդեն վերը նշվեց, այդ տարիներին կառավարության կողմից համապատասխան ուշադրության չարժանանալու հետևանքով, սեփականաշնորհումը, հակառակ սպասումներին, բերեց գործազրկության հսկայական աճ, բնակչության զգալի մասը կորցրեց իր աշխատատեղերը, սնանկացավ ձեռնարկությունների մի ստվար հատված, զբաղվածության մակարդակը հանրապետությունում զգալիորեն անկում ապրեց:

Միայն 1997 թ. սկսած՝ կարևորվեց փոքր և միջին ձեռնարկությունների դերը ձեռնարկատիրական գործունեության մակարդակի բարձրացման հարցում. ստեղծելով բազմաթիվ նոր աշխատատեղեր՝ հիմք դրվեց ձեռնարկատիրական գործունեության աջակցության կոորդինացված համակարգի ձևավորմանը: Պետությունն այդ ոլորտի զարգացմանն ուղղված քաղաքականությունն ամուր հիմքերի վրա դնելու նպատակով, 2000 թ. մշակեց և հաստատեց Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության ռազմավարական հիմնադրույթները, ինչը հնարավորություն ընձեռեց ընդունել «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, որտեղ ամրագրվեցին պետական աջակցության այն հիմնական ուղղությունները, որոնք կիրառվեն ոլորտի զարգացումը:

2002 թ. ի վեր Հայաստանում մշակվում և իրականացվում են փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրեր, որոնք ընդգրկում են Հայաստանում ձեռնարկատիրական գործունեություն ծավալելուն և զարգացնելուն նպատակառուղիված աջակցության միջոցառումների լայն շրջանակ: Հատկանշական է, որ փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրի ֆինանսավորումը սկզբնական շրջանում իրականացվում էր միայն պետական

³ Small and Medium Enterprises, Growth, and Poverty: Cross-Country Evidence, T. Beck, A.D. Kunt, and R. Levine, World Bank Policy Research Working Paper 3178, Dec. 2003.

⁴ OECD Small and Medium Enterprise Outlook – 2002 Edition, OECD Publishing, 2002, p. 252.

բյուջեի միջոցների հաշվին, իսկ վերջին տարիներին ավելացել են նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների նպատակային օժանդակությունն ու աջակցությունը:

Հայաստանում, ինչպես նշեցինք, փոքր ու միջին ձեռնարկատիրության աջակցությունը վերջին տարիներին ստացել է համակարգված բնույթ: Պետական աջակցությունն ու ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումն արդյունավետ կազմակերպելու և ղեկավարելու նպատակով, ՀՀ կառավարության որոշմամբ, 2002 թվականից այդ առաքելությունը ստանձնել է Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամը՝ որպես Հայաստանում այդ ոլորտի պետական աջակցություն իրականացնող հիմնական մարմին⁵: Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական օժանդակության ծավալները պետական աջակցության ծրագրերով տարեցտարի ավելանում են: Այսպես, 2009 թ. փոքր և միջին ձեռնարկատիրության տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքի մեջ կազմել է 42.5%՝ 2008 թ. 41.7%-ի և 2007 թ. 41.0%-ի դիմաց⁶: Միևնույն ժամանակ, ավելացել է նաև ոլորտի մասնաբաժինը երկրի արտահանման ծավալում՝ կազմելով 17.9%՝ 2008 թ. 17.7%-ի և 2007 թ. 17.4%-ի դիմաց⁷:

2002-2008 թ. պետական աջակցության ծրագրերի ջջանակում ոլորտի զարգացմանը պետական բյուջեից ուղղվել է ավելի քան 1.6 մլրդ դրամ: Ընդ որում, վիճակագրությունը փաստում է, որ հատկացումները աճի միտումներ են դրսևորում. եթե 2002 թ. տրամադրվել է ընդամենը 20 մլն դրամ, ապա 2008 թ. արդեն՝ 450 մլն դրամ: Աշխատանքի շուկայի կարգավորման տեսանկյունից առավել հետաքրքիր է աղյուսակ 1-ը, որտեղ ներկայացված է փոքր և միջին ձեռնարկություններում զբաղվածության ընդհանուր իրավիճակը վերջին տարիներին:

2010 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում կար փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում գործող 132,923 տնտեսվարող սուբյեկտ, ինչը կազմում է գրանցված անհատ ձեռնարկատերերի և առևտրային իրավաբանական անձանց շուրջ 97,7%-ը⁷:

⁵ ՀՀ կառավարության 2002 թ. մարտի 19-ի «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամ» ստեղծելու մասին թիվ 282-Ն որոշում:

⁶ ԱՄՆ-ում փոքր բիզնեսի տեսակարար կշիռը կազմակերպությունների ընդհանուր թվում կազմում է 99.7%, ՀՆԱ-ի մեջ՝ 52%, իսկ զբաղվածների ընդհանուր քանակում՝ 53% (Small Business in Japan “White Paper on Small and Medium Enterprises in Japan” MITI, 2002, 219 p., p. 109):

⁷ «Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2006- 2008 թթ.» ԵԱՀԿ երևանյան գրասենյակ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ, Ե., 2009:

⁷ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային կայք www.stat.am և Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի պաշտոնական ինտերնետային կայք www.smednc.am:

Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրական սուբյեկտներում զբաղվածների քանակը 2006-2008 թթ.⁸

Տարի	Զբաղվածության ընդհանուր մակարդակը		Գործազրկություն
	ՓՄՁ սուբյեկտներում	Տնտեսության մեջ զբաղված տնտեսապես ակտիվ բնակչության քանակը (հազ.մարդ)	Տոկոսը զբաղվածների ընդհանուր քանակում
			Տոկոսը զբաղվածների ընդհանուր քանակում**
2006	35.1	1092.4	7.4
2007	40.7	1101.5	7.0
2008	42.1	1119.7	6.3

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման մասին առավել ամբողջական ու լիարժեք պատկերացում է տալիս նաև աղյուսակ 2-ը:

Աղյուսակ 2

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը բնութագրող ցուցանիշները Հայաստանի Հանրապետությունում 2002-2009 թթ.⁹

Տարի	Մասնավոր հատվածի տեսակարար կշիռը տնտեսությունում, %	ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ, %	ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածության տեսակարար կշիռը, զբաղվածության ընդհանուր քանակում, %	1 շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	ՓՄՁ զարգացման ինդեքսը (ՀՆԱ-ի նկատմամբ՝ մեկ շնչին ընկնող եկամուտների հաշվով)
2002	81	34.4	28.2	739.9	58.1
2003	83	36.5	31.0	873.4	82.0
2004	84	38.6	32.9	1104.4	117.8
2005	84	39.8	34.0	1513.0	171.9
2006	84	40.3	35.1	1996.0	237.2
2007	84	41.0	40.7	2844.0	398.6
2008	84	41.7	42.1	3689.0	544.0
2009	84	42.5	42.2	2686.0	404.7

⁸ Նույն տեղում:

**Ներառված չեն պետական կառավարման համակարգում և գյուղացիական տնտեսություններում զբաղվածները:

⁹ «Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2004- 2005 թթ.» ԵԱՀԿ երևանյան գրասենյակ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ, Ե., 2006: «Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2005-2006 թթ.», ԵԱՀԿ երևանյան գրասենյակ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ, Ե., 2007: «Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2007-2008 թթ.», ԵԱՀԿ երևանյան գրասենյակ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ, Ե., 2008: Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի պաշտոնական ինտերնետային կայք՝ <http://www.smednc.am>:

Այստեղ ուշադրության է արժանի հատկապես վերջին պոնը: ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի անցումային երկրների փոքր և միջին ձեռնարկությունների զարգացումներին հետևող մասնագետները երկրի տնտեսական համակարգում փոքր և միջին ձեռնարկատիրության դերի ու նշանակության առավել ամբողջական պատկերը ստանալու նպատակով մշակել են «ՓՄՁ զարգացման ինդեքս» համապարփակ ազրեզացված ցուցանիշը: Այն լայնորեն կիրառվում է ոլորտի վերաբերյալ իրականացված հետազոտություններում, հնարավորություն է տալիս կատարել միջազգային համեմատություններ՝ ներառելով փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ամբողջ մասնաբաժինը՝ ազգային տնտեսության մակարդակով: Ընդհանուր առմամբ, ինդեքսն արտացոլում է երկրում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման աստիճանը:

Ինչպես երևում է N 2 աղյուսակից, 2009 թ. ՓՄՁ զարգացման ինդեքսը կազմել է 404.7, որը 2002 թ. համեմատ աճել ավելի քան 7 անգամ: Թեև վերջին տարիներին հիշյալ ոլորտում արձանագրվում են որոշակի տեղաշարժեր, սակայն ուսումնասիրությունները, ինչպես նաև աղյուսակում տեղ գտած ցուցանիշները վկայում են Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի հետագա զարգացմանն առավելագույնս օժանդակելու անհրաժեշտության մասին, այսինքն՝ առաջիկա տարիներին ևս կառավարությունը պետք է ընդլայնի փոքր և միջին ձեռնարկությունների կայացմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքները:

3. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը խոչընդոտող գործոնները Հայաստանում: Չի կարելի չնկատել, որ վերջին տարիներին Հայաստանում, կյանքի տարբեր բնագավառներում, նկատելի են որոշակի դրական տեղաշարժեր, միննույն ժամանակ, զարգացման գործընթացում առկա են խնդիրներ, որոնք լարվածություն են առաջացնում և արհեստական խոչընդոտներ են ստեղծում փոքր ձեռնարկատիրության կայացման ու զարգացման ճանապարհին: Մասնավորապես՝ այդ խնդիրները կապված են տարածքային զարգացման անհամաչափությունների հետ: Անգեն աչքով էլ երևում է, որ Հայաստանը կարծես բաժանված լինի երկու մասի, Երևանը՝ իր շրջակայքով և հանրապետության մարզերը: Առաջինի դեպքում աշխատանքի շուկան գտնվում է համեմատաբար բնականոն վիճակում, առկա են որոշակի մրցակցային դաշտ, եկամուտների ստեղծման համեմատաբար բարձր մակարդակ: Ի հակադրություն սրա՝ կենտրոնից հեռու գտնվող մարզերը զարգանում են թույլ տեմպերով, բոլոր ռեսուրսները, այդ թվում՝ նաև մարդկային, անխուսափելիորեն հոսում են դեպի կենտրոն՝ նվազեցնելով տարածքների զարգացման ներուժը: Սա պայմանավորված է մարզերի՝ տնտեսապես թույլ զարգացածությամբ և ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության տարածաշրջանային քաղաքականության բացակայությամբ, որն էլ իր հերթին ավելի է խորացնում տնտեսական և սոցիալական ծանր կացությունը Հայաստանի մարզերում:

Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման տեսանկյունից հաջորդ լուրջ խոչընդոտը հեռահաղորդակցման ուղիների անբավարար վիճակն է: Հիմնականում ծանր է այն մարզերի և շրջանների վիճակը, որոնք հեռու են հեռահաղորդակցման ուղիներից, տրանսպորտային միջոցներից, ձևավորված չեն շուկայական տնտեսության անհրաժեշտ ենթակառուցվածքները:

Հայաստանում, հատկապես սահմանամերձ, լեռնային բարձրադիր շրջաններում, ձեռնարկատիրության և ընդհանրապես աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում կարևոր դեր ունի քաղաքային և գյուղական համայնքների ճանապարհային տնտեսության բարեկարգումը՝ հանրապետության տրանսպորտային համալիրի աշխուժացման բազայի վրա: Համայնքային նշանակության նոր ճանապարհների, լեռնանցքների, դեպի Իրան ձգվող երկաթգծի կառուցումը, Վրաստանով անցնող երկաթգծի վերագործարկումը, Գյումրի-Կարս երկաթուղու վերստին շահագործումը շարունակում են մնալ օրվա հրամայական:

Անկախության տարիների սկզբնական շրջանում շատ ճանապարհներ քարուքանդ եղան և նույնիսկ այժմ էլ գտնվում են անմխիթար վիճակում: Դրանց վերանորոգումը հիմնականում կախված է ոչ բավարար ֆինանսական միջոցների առկայությունից: Փոքր-ինչ բարվոք վիճակում են հանրապետության՝ միջպետական նշանակություն ունեցող ճանապարհները, որոնց վերականգնումը հիմնականում իրականացվել է սիյուռքի, հատկապես «Լինսի» հիմնադրամի ֆինանսական խոշոր աջակցության շնորհիվ: «Լինսի» հիմնադրամի օժանդակությամբ, ճանապարհային տնտեսությունում իրականացվել են շուրջ 21 մլրդ դրամի ներդրումային ծրագրեր¹⁰:

Ճանապարհաշինության գործում վերջին տարիներին բավական մեծ ներդրում է ունեցել նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամը, որի տրամադրած միջոցների հաշվին կառուցվել և բարեկարգվել են Լեռնային Ղարաբաղի և հանրապետության ներսում մի շարք շրջկենտրոններ միացնող ճանապարհները: Հիմնադրամի միջոցներով է կառուցվել Գորիս-Ստեփանակերտ ռազմավարական նշանակություն ունեցող մայրուղին, որի դերը անգնահատելի է Հայաստան-Արցախ ինտեգրման գործընթացում:

Հսկայական ներդրումներ են կատարվել նաև Արցախում, հատկապես աչքի է ընկնում հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցումը, որը հնարավորություն տալով կապ հաստատել Լեռնային Ղարաբաղի քաղաքների և գյուղերի միջև՝ մեծապես նպաստում է երկրի տնտեսության աշխուժացմանը: Ռազմավարական նշանակության ճանապարհներից կարևորվում է նաև Մարտունի-Եղեգնաձոր տանող Սելիմի լեռնանցքի շահագործումը, որը նույնպես լուրջ խթան է ինչպես տարածաշրջանի գործարար միջավայրի աշխուժացման, այպես էլ երկրի ողջ տնտեսության զարգացման տեսանկյունից: Իսկ տեղական նշանակության ճանապարհները, որոնք մարզպետարանների ենթակայության տակ են, շարունակում են մնալ վատթար

¹⁰ ՀՀ կառավարության գործունեությունը 2000-2004 թթ., Ե., 2005, էջ 28:

վիճակում: Դրանց անմխիթար վիճակը, առանձին դեպքերում նաև որոշ հատվածների իսպառ բացակայությունը անհնար են դարձնում հանրապետության հեռավոր շրջանների հաղորդակցությունը մարզկենտրոնների և մայրաքաղաքի հետ¹¹, բացասաբար են անդրադառնում հատկապես գյուղատնտեսության բնագավառի վրա: Ավելին, սակավահող Հայաստանում նախկինում մշակվող հողատարածքների զգալի մասը ներկայումս չի մշակվում՝ պայմանավորված տրանսպորտային համապատասխան միջոցների և գյուղատնտեսական տեխնիկայի բացակայությամբ: Հարկավոր է անցում կատարել սեփականության խմբային ձևին՝ կազմավորելով խոշոր ֆերմերային տնտեսություններ, որն էլ ենթադրում է գյուղատնտեսական մթերքների արտադրության և մշակման կոոպերացված քաղաքականության իրագործում¹²: Մասնավորապես՝ հանրապետության սահմանամերձ, լեռնային բարձրադիր գոտիների քաղաքներում և գյուղերում ճանապարհների անբարեկարգ վիճակը կամ դրանց դժվարանցանելի լինելը մեծ խոչընդոտ են գյուղմթերքների արտադրության, իրացման, վերամշակման բոլոր բնագավառներում անխտիր: Այդ է պատճառը, որ գիշեր ու գօր գյուղացու քրտնաջան աշխատանքով արտադրված արժեքավոր գյուղատնտեսական մթերքների, հատկապես մրգերի զգալի մասը սեզոնի ընթացքում ոչ ու փուչ է լինում: Գյուղացին իր արտադրած մթերքների ձեռքն ուղղակի կրակն է ընկնում, ծախսերը շատ են, արդյունքը՝ քիչ: Հանրապետության հեռավոր, լեռնային շրջանների հետ տնտեսա-

¹¹ Այստեղ, ընդհանուր առմամբ, նպատակահարմար է խորհել նաև մարզերից յուրաքանչյուրում որոշ քաղաքներ հզորացնելու, դրանք սոցիալական համակարգի իրական կենտրոն դարձնելու մասին: Այդպիսի կենտրոնը, միջմարզային տրանսպորտային կանոնավոր ցանցի պայմաններում, մերձակա գյուղական բնակչության կենտրոնաձիգ գործընթացը կգուճակցի կենտրոնախույսի հետ: Կենտրոնաձիգ այն իմաստով, որ հարևան գյուղերի բնակչությունը կապահովվի համապատասխան զբաղմունքով, և դրանով իսկ խիստ կմեղմացվի բնակչության արտագաղթը դեպի խոշոր քաղաքներ և այլ երկրներ:

¹² Այդ մասին մանրամասն տե՛ս **Խոջաբեկյան Վ. Ե.**, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դ. շեմին, Ե., 2002, էջ 369-373: Ի դեպ, ՀՀ Գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալի՝ 01.10.2010 թ. ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրենին ուղղած ՍԱ /02.2/4038-10 նամակով տեղեկացվում է, որ ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի՝ հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման, փոքր և միջին ձեռնարկատիրության խթանման, գյուղացիական տնտեսությունների խոշորացման և մի շարք այլ ուղղություններով արած առաջարկություններն ունեցել են կիրառական նշանակություն և հաշվի են առնվել ՀՀ տնտեսության ազարային հատվածի քաղաքականությանն առնչվող մասով, իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև վերլուծությունների և առաջարկությունների ներկայացման գործընթացում: Հիշյալ նամակում մասնավորապես նշվում է՝ «Ուշագրավ էին և արդիական ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի կողմից կատարված ուսումնասիրությունները և տրված առաջարկությունները՝ ՀՀ գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիայի խթանման, այդ բնագավառում պետական աջակցության ընդլայնման և մեխանիզմների ներդրման ուղղությամբ: Գյուղատնտեսական կոոպերացիայի վերաբերյալ ակադեմիկոսի առաջարկությունները հաշվի են առնվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակված «Գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թթ. կայուն զարգացման ռազմավարության» և «ՀՀ-ում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգի» նախագծերում»:

կան կոոպերացիայի ջլատման, տրանսպորտային փոխադրումների դժվարությունների հետևանքով հատվել է մրգատու այգիների մեծ մասը¹³:

Ճանապարհային ցանցի, առանձնապես տեղական նշանակության ճանապարհների բարեկարգումը մեծապես կբարձրացնի նաև գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղմթերքների իրացման հնարավորությունները, ինչոր չափով կլուծվի գյուղմթերքների իրացման շուկաների անհասանելիության հարցը: Ժամանակն է մշակել գյուղական վայրերի զարգացման խրախուսմանն ուղղված ամբողջական և համալիր քաղաքականություն՝ շեշտը դնելով պետության կողմից գյուղատնտեսության սուբսիդավորման քաղաքականության վրա: Ճանապարհների վերականգնումը, տրանսպորտային և, ընդհանրապես, արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքների ձևավորումն ու զարգացումը կլուծեն բնակչության զբաղվածության հարցերը տնտեսության տարբեր ոլորտներում: Այս խնդիրներով մտահոգված են նաև Հայաստանին ֆինանսական աջակցություն ցուցաբերող օտարերկրյա կազմակերպությունները: Այդ են վկայում Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և միջազգային այլ կազմակերպությունների՝ ճանապարհաշինության ոլորտում իրականացվող բավական լուրջ ներդրումային ծրագրերը:

Հատկանշական է նաև ԱՄՆ-ի կառավարության «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի տրամադրած ֆինանսական աջակցությունը, որի մեծ մասը ուղղվել է հենց գյուղատնտեսությանը, գյուղատնտեսական նշանակության տարբեր ենթակառուցվածքների զարգացմանը: ՀՀ կառավարությունը և Հայաստանի իշխանությունները «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամին ներկայացրած ծրագրով ակնկալում էին հիմնականում կրճատել գյուղական աղքատությունը՝ գյուղատնտեսական արտադրանքի կայուն աճի ապահովման միջոցով: Սույն ծրագրի շրջանակում, այս նպատակի ապահովման համար ռազմավարական ներդրումներ իրականացվեցին գյուղական նշանակության ենթակառուցվածքների վերականգնմանն ու վերակառուցմանն ոլորտում, ռոտզման ենթակառուցվածքներում, ֆինանսական և տեխնիկական լայն աջակցություն տրամադրվեց գյուղացիական խոշոր տնտեսություններին և ագրոբիզնեսին:

Սակայն համաշխարհային տնտեսական ճգնաժամը, դրան ավելացրած՝ Հայաստանում ձևավորված քաղաքական իրավիճակն իրենց բացասական հետևանքներն ունեցան հիշյալ ոլորտներում ներդրումների բարեհաջող, լիարժեք և ամբողջական իրականացման գործընթացում: «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի՝ Հայաստանին հատկացվող 235 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ծրագիրը կոոպերացիայի տնօրենների խորհրդի կողմից 2009 թ. կրճատվեց շուրջ 60

¹³ Երբեմնի հսկայական տարածություններ զբաղեցնող խաղողի, ծիրանի և այլ մրգատու այգիները վերածվել են հացահատիկի ցանքատարածությունների, ճիշտ այնպես, ինչպես հարյուրավոր տարիներ առաջ, երբ գյուղական ամեն մի ընտանիք մտահոգված էր ամենօրյա հացահատիկի հոգալ ինքը հոգալու խնդրով:

մյն ԱՄՆ դոլարով: Ընդ որում, կրճատվեց հիմնականում ճանապարհաշինության ծրագրի ֆինանսավորումը, շարունակվեց և ավարտին հասցվեց միայն ոռոգման համակարգերի կառուցման ծրագիրը:

Թեև ՀՀ կառավարությունը վերջին տարիներին կարևորում է կապիտալ ներդրումները ճանապարհային տնտեսության մեջ, այնուամենայնիվ, դրանք դեռևս բավարար չեն: Բայց և այնպես, պետական բյուջեի միջոցների հաշվին է իրականացվել Կապան-Ծավ-Շվանիձոր-Մեղրի ռազմավարական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգումը: ՀՀ իշխանությունները, հաշվի առնելով բարձրադիր գոտիների սոցիալ-տնտեսական վիճակը, պետք է հնարավորինս աջակցեն ճանապարհային տնտեսության վերականգնմանը և զարգացմանը՝ պարբերաբար վերանայելով պետական ծախսային քաղաքականությունը: Տարածքային արդյունավետ քաղաքականությունը դարձել է ժամանակի հրամայական: Անհրաժեշտ է մշակել տարածքային զարգացման խրախուսմանն ուղղված համալիր քաղաքականություն, որի շրջանակում հարկ է իրականացնել տարածքային զարգացման անհամաչափությունները մեղմելուն և հանրապետության մարզերի աշխուժացմանն ու զարգացմանն ուղղված պետական լայնամասշտաբ միջոցառումներ:

Փոքր և միջին բիզնեսի զարգացմանը էապես խոչընդոտում է երկրում վարվող հարկային և վարկային անտրամաբանական, չհիմնավորված քաղաքականությունը: Տնտեսվարող սուբյեկտների վրա դրված հարկային ծանր բեռը հաճախ չի համապատասխանում մեր տնտեսության իրական հնարավորություններին: Հանրապետությունում փոքր ձեռնարկություններին տրված արտոնությունները, իհարկե, եթե այդպիսիք կան, շատ սահմանափակ են, ինչը վերջիններիս ստիպում է հարկերից խուսափելու օրինազանց մեթոդներ ու ճանապարհներ գտնել, որի բացասական հետևանքներն էլ ավելի են ծանրացնում հասարակության սոցիալական վիճակը:

Պետությունը հարկային ճկուն քաղաքականության միջոցով պետք է հնարավորություն ընձեռի սկսնակ ձեռնարկատիրոջը՝ իր գործը ընդլայնելու և զարգացնելու: Այսինքն՝ Հայաստանում հարկային համակարգը լուրջ բարեփոխումների կարիք ունի, ընդ որում՝ բարեփոխումների շարքում առաջնահերթությունը պետք է վերապահել հարկային ոլորտում վարչության բարելավմանն ու կատարելագործմանը, որը բոլոր հարկատուների նկատմամբ հավասար վերաբերմունք ցուցաբերելու հնարավորություն կստեղծի:

Ֆինանսավարկային համակարգի անկատար վիճակը ևս մեծապես ազդում է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման գործընթացի վրա: Պարզ է, որ առանց համապատասխան ֆինանսական միջոցների առկայության, ոլորտը զարգանալ չի կարող: Բայց այստեղ խնդիրն այլ է: Բանն այն է, որ դրանք որոշակի չափով առկա են, բայց ձեռնտու չեն ձեռնարկատերերին՝ իրենց բարձր տոկոսադրույքների և կարճատև լինելու պատճառով: Համապատասխան երաշխիքների և

վստահության մթնոլորտի բացակայության պայմաններում առևտրային բանկերը խուսափում են վարկավորել փոքր և միջին ձեռնարկություններին: Այս առումով պետությունը որոշակի քայլեր ունի անելու ֆինանսական շուկայում վիճակը շտկելու և կատարելագործելու համար: Այդ քայլերն, առաջին հերթին, ուղղվելու են ոլորտի տնտեսվարող սուբյեկտներին երկարաժամկետ, արտոնյալ և ցածր տոկոսադրույքներով վարկեր տրամադրելուն, որոշ դեպքերում տրամադրվող վարկերի դիմաց պահանջվող երաշխիքի պատասխանատու դարձնելուն:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը խոչընդոտող գործոններից հատկապես կարևոր է հավասար մրցակցություն ապահովող միջավայրի ձևավորման բարդությունը՝ թե օրենսդրական, թե գործնական մեխանիզմների կայացման առումով: Տվյալ դեպքում տնտեսության մեջ հավասար մրցակցություն ապահովելն անտրամաբանական է, քանի որ փոքր և միջին ձեռնարկատիրոջ համար միշտ պետք է ձևավորել արտոնյալ պայմաններ, որպեսզի նա կարողանա աճել և ձևավորել հասարակության համար անհրաժեշտ միջին խավը, որն այսօր բացակայում է, և որով պայմանավորված են քաղաքացիական հասարակության կառուցումն ու երկրի անվտանգությունը: Հարկավոր է իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ և օրենսդրական նախաձեռնություններ բնական մենաշնորհների գործունեությունը վերանայելու և բարելավելու նպատակով, ինչը բովանդակային նոր ուժ կհաղորդի մրցակցային ճիշտ միջավայրի ձևավորմանը: Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը կախված է նաև իրավական և օրենսդրական դաշտի կատարելագործումից, ներդրումային դաշտի գրավչության ընդլայնմանն ուղղված հնարավորությունների, արտաքին տնտեսական գործունեության ընդլայնումից և արտահանման խթանման քաղաքականությունից, անհրաժեշտ տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական և կադրերի վերապատրաստման համակարգի ծառայություններից օգտվելու հասանելիությունից ու մատչելիությունից և ընդհանրապես անհրաժեշտ ենթակառուցվածքների լիարժեք զարգացումից:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հարցերը քրննարկելիս չպետք է անտեսել նաև այնպիսի կարևորագույն խոչընդոտներ, ինչպիսիք են՝ վարչարարական բնույթի խնդիրները (հաշվապահական հաշվետվությունների ներկայացման բարդացված ընթացակարգեր, տնտեսվարող սուբյեկտներում հաճախակի և չտրամաբանված ստուգումներ և այլն), կոռուպցիան, բյուրոկրատական քաշքշուկները, շուկա մտնելու սահմանափակ հնարավորությունները: Ուստի՝ մեծ թվով փոքր և միջին ձեռնարկություններ գործում են տնտեսության ստվերային հատվածում, որը, էթե անցումային տնտեսություն ունեցող երկրներում, ըստ տարբեր գնահատականների, կազմում է ՀՆԱ-ի մոտ 25-35%-ը¹⁴, ապա Հայաստանում այդ ցուցանիշը տատանվում է 40-45%-ի սահմաններում:

¹⁴ Ստվերային տնտեսության ամենատարածված սահմանման համաձայն, գործունեության այն տեսակները և գործարքները, որոնք կրում են առևտրային բնույթ, չեն ներառվում երկրի ՀՆԱ-ի պաշտոնական գնահատականների մեջ, իսկ դրանց արդյունքներն ու ստացված եկամուտները չեն հաշվարկվում երկրի հարկային մարմինների կողմից: Ստվերային տնտեսությունը ներառում է օրենքի

Այսպիսով, կառավարությունն այսօր գիտակցում է երկրի աշխատանքի շուկայում և, ընդհանրապես, սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման գործում փոքր բիզնեսի ունեցած դերն ու կարևորությունը, հետևողականորեն օժանդակում է ձեռնարկատիրական գործունեության բարենպաստ միջավայրի ստեղծմանը, պետական քաղաքականության համակարգված իրականացմանը և կատարելագործմանը: Այնուամենայնիվ, դեռևս կան լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ, որոնք առավել, քան երբևէ հրատապ են, և որոնց ձեռնարկատերերը բախվում են գրեթե ամեն պահի: Ասվածը առանձնապես վերաբերում է օրենսդրական աջակցության, իրավական խորհրդատվության, ֆինանսական ու տեխնիկական օժանդակության ընդլայնման, տեղեկատվության մատչելիության և հասանելիության, գիտատեխնիկական առաջընթացին հետևելու, վերջինիս արդյունքներն ընկալելու, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և, որ ամենակարևորն է, համապատասխան կրթություն ու որակավորում ունեցող կադրերի բացակայության խնդիրներին:

Ընդհանրացնելով շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանում արդյունավետ կլինի աշխատանքի շուկայի կարգավորման մեջ ներգրավել նաև օտարերկրյա այլ պետություններում ծառայություններ մատուցող ոչ պետական ձեռնարկություններ և հաստատություններ, որոնք իրենց գործունեությունը կիրականացնեն համապատասխան թույլտվություն (լիցենզիա) ունենալու դեպքում. դա նույնպես կխթանի աշխատանքի շուկայի կարգավորումն ու զարգացումը: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը զարգացնելու, և դրա միջոցով նոր աշխատատեղեր ստեղծելու համար հարկավոր է ապահովել պետական աջակցության ծրագրերի իրականացման շարունակականությունը՝ բարձրացնելով միջոցառումների արդյունավետությունը, դրանք դարձնելով էլ ավելի նպատակային, ինչպես նաև աշխատանքներ ձեռնարկել նոր ծրագրեր մշակելու և իրագործելու ուղղությամբ: Անհրաժեշտ է նաև պետության հովանավորությամբ, պետական ծրագրերով հնարավորություններ ստեղծել միջազգային և օտարերկրյա գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցելու, ֆինանսական միջոցներ ներգրավելու և նոր նպատակային շուկաներ գրավելու համար:

Պետք է ընդլայնել պետական աջակցությունը՝ վարկային երաշխավորություն տրամադրելու, որակի կառավարման միջազգային ստանդարտներ (համակարգեր), նորարարություններ ու ժամանակակից տեխնոլոգիաներ ներդնելու, ապրանքների (ծառայությունների) նոր շուկաներ առաջմղելու և խթանելու, սկսնակ գործարարների ձեռներեցության օժանդակության, ինչպես նաև գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ուղղություններով: Առաջիկա

կողմից հետապնդվող, ինչպես նաև օրենքով չարգելված տնտեսական այն գործունեությունը, որը կամ պետականորեն գրանցված չէ, կամ դրա արդյունքները լրիվ կամ մասնակի թաքցվում են պետական վիճակագրական և հարկային մարմինների կողմից (ՀՀ կառավարության 2003 թ. օգոստոսի 8-ի «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը» հաստատելու մասին թիվ 994 որոշում, էջ 84-85):

տարիներին հարկավոր է ծրագրային միջոցառումների զգալի մասն ուղղել հանրապետության տարբեր մարզեր, որտեղ սնտեսվարող սուբյեկտները արտոնյալ պայմաններով կատանան լրացուցիչ վարկային երաշխավորություններ:

Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում անհրաժեշտ է առանձնակի լուրջ ուշադրություն դարձնել սկսնակ գործարարների ձեռներեցությանը օժանդակելու խնդիրներին:

МАЛЫЙ И СРЕДНИЙ БИЗНЕС В АРМЕНИИ

ХОДЖАБЕКЯН В. Е., ПАПАЗЯН Х. С.

Резюме

В настоящее время занятость населения, проблемы безработицы и в целом регулирование рынка труда все еще остаются на повестке дня. Срочное решение этих задач может стимулиро-вать экономику, активизировать общественную жизнь в разных регионах республики, что, в свою очередь, будет содействовать сбалансированной региональной политике развития.

Наилучшим и современным механизмом государственного регулирования является развитие в стране малого и среднего бизнеса в качестве гарантии обеспечения экономической и социальной стабильности в условиях рыночной экономики. При этом в сфере малого и среднего бизнеса цели государственного содействия почти одинаковы во всех странах, а существующие особенности в основном обусловлены национальным менталитетом той или иной страны, уровнем развития, направлением экономики, что непременно должно быть учтено при разработке государственной политики и ее осуществлении.

В Армении, в качестве предпосылки развития малого и среднего бизнеса, следует совершенствовать дорожное хозяйство, что послужит стимулом для развития сельского хозяйства на основе осуществления кооперированной политики групповой собственности и сельскохозяйственных продуктов. В рамках государственной политики следует уделить серьезное внимание развитию малого и среднего бизнеса во всех сферах экономики республики на льготных условиях, что сформирует также средний класс населения, на сегодняшний день отсутствующий в республике.